մեծամասնութիւնը Հայք և Պարսիկք են։ Պարսիկք են տունք երեք հազարաշափ, իսկ Հայք են աւելի քան հինգ հարիւր տուն։ Կան և 70 տուն բողոքական հայեր և նոյնչափ մալականեր աղանդակիցք միմեանց։ Բոլոր ազգերը միասին և միմեանց հետ վարվում են սիրով, ամենքը իրենց կրօնը պաշտելով (բացի բողոքականաց՝ որք իրենց սուրբ համարելով՝ ուրիշների հետ յարաբերութիւն չունին, ճիշդ Քրիստոսի ժամանակի կեղծաւոր փարիսեցւոց նման) և զարմանք չէ, որ Համախեցիք այդպէս են, ըստ որում Աղուանից ազգի մնացորդներն են, և մեծ բան է, որ այս Համախու բողոքականքն Քրիստոնեայ են մնացել, չեն թուրքացել այսքան թուրքերի մէջ լինելով։

Համախւոյ օդն առողջարար է և ջուրն բարեհամ, բաւականին յարմար է Բագուին ամարանոց լինելու։ Հայք ունին երկու եկեղեցի սրբատաշ քարով շինուած, մէկը խստաւ հնացած և քայքայուած, որ կառուցուած է Համախու բարեպաշտ ժողովրդի արդիւնքով՝ թուին Հայոց ՌՃԾԵ, որ է 1706 Փրկչական, ի թագաւորութեան Զահ Սուլթան Պարսից արքային, խնդրանօք Տփխիսեցի բարեպաշտ իշխանի Էլչի թագի Մանդինեանց։ Ըստ ասութեան և աւանդութեան Համախեցւոց՝ այս եկեղեցւոյ հին պատի մէջ իբր թէ երեւացել է սրբոյ Սուքիասեանց նշխարքը, բայց յետինքը ստուգելով գտել են, որ սուրբ Եղիշէ Առաքելոյ մասունքն է, Աղուանից աշխարհի առաջին Լուսաւորչի, և ոչ Սուքիասեանց, որք 19 անձինք էին, և սոցա մասունքը լինել անկարելի էր. ուստի և այս մասունքը յանուն Եղիշէ Առաքելոյն ընդունուած՝ պահվում է Սաղիանի վանքումն։ Այս եկեղեցին 1881 թուէն դադարած է ժամերգութիւնից խիստ քայքայուած լինելոյ պատճառաւ, և մանաւանդ Հայ ժողովրդի սակաւաթիւ լինելոյ պատճառաւ. ըստ որում ոմանք Բագուի նաւթահանքերի բարի համբաւից հրապուրուած, և այլք յաճախ երկրաշարժի երկիւղից ստիպուած՝ հեռացել են Համախուց։ Եւ ահա այս հին եկեղեցւոյ վրայի արձանագրերն՝ Արեւմտեան դրան ճակատին հիւսիսային կողմին գրուած է այսպէս.